ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ՈՐՈՇՈՒՄԸ

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԶԱՅԻՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԱՆԽԱՓԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով երկրում ստեղծված տնտեսական բարդությունը, որը խորանում է երկաթուղային տրանսպորտի ու մի շարք բազային ճյուղերի աշխատանքում տեղի ունեցող ընդհատումներով, ինչը բացասաբար է ազդում ժողովրդական տնտեսության աշխատանքի վրա, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը **որոշում է՝**

1. Բեռների անխափան առաքումը և բնակչությանը վառելիքի, պարենամթերքի, արդյունաբերական ապրանքների կայուն մատակարարումն ապահովելու նպատակով, հատկապես աշնան-ձմռան շրջանում, միութենական հանրապետությունների գերագույն խորհուրդներին ու մինիստրների խորհուրդներին, ԽՍՀ Միության մինիստրություններին ու գերատեսչություններին, ժողովրդական դեպուտատների տեղական խորհուրդների գործադիր կոմիտեներին, ձեռնարկությունների ղեկավարներին՝ անհետաձգելի միջոցներ ձեռնարկել տրանսպորտի աշխատանքը խախտող հակաօրինական գործողությունները կանխարգելելու համար։

2. Հատուկ ուշադրություն դարձնել Անդրկովկասի երկաթուղիներում ստեղծված անթույլատրելի վիճակի վրա և հանդուրժելի վիճակի վրա ռեգիոնների պետական կառավարման բոլոր մարմիններին պարտավորեցնել գնացքների նորմալ երթևեկությունը անհապաղ վերականգնել հիշյալ երկաթուղիների բոլոր տեղամասերում։

ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին հանձնարարել այդ երկաթուղիների ղեկավարումը անհրաժեշտության դեպքում դնել անմիջականորեն ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների մինիստրության վրա, հիշյալ երկաթուղիների գործունեության կենսապահովման առանձին տեղամասերով օբյեկտների, ինչպես նաև կամուրջների ու թունելների պահպանությունը, տրանսպորտի աշխատողների ու քաղաքացիների անվտանգության ապահովումը հանձնարարել ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրությանը, ԽՍՀՄ պաշտպանության մինիստրությանը և ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների մինիստրությանը։

3. Այն կապակցությամբ, որ ժողովրդական տնտեսության կայուն աշխատանքն ապահովվում է տրանսպորտի ձեռնարկությունները, վառելիքաէներգետիկ համալիրը, մետալուրգիական ու քիմիական ձեռնարկությունները ձմռան պայմաններում աշխատելուն ժամանակին նախապատրաստելով, սարքավորումների որակյալ նորոգումով, ձեռնարկություններում վառելիքի, հումքի ու նյութերի նորմատիվ պաշարների ստեղծումով, մինչև համապատասխան օրենքի ընդունումը այդ ձեռնարկություններում գործադուլներն արգելել։

Միութենական ու ինքնավար հանրապետությունների մինիստրների խորհուրդներին, ժողովրդական դեպուտատների երկրամասային, մարզային, օկրուգային, շրջանային ու քաղաքային խորհուրդներին իրավունք վերապահել ձմռան շրջանում փոխելու այդ տերիտորիաներում գտնվող ձեռնարկությունների, ժողովրդական տնտեսության այլ ճյուղերի աշխատանքի ռեժիմը, այդ թվում՝ տեղափոխելու հանգստյան օրերը, փոխելու աշխատանքային հերթափոխերի սկիզբն ու ավարտը, ձեռնարկությունների աշխատանքի գրաֆիկները սահմանելու՝ ելնելով էլեկտրական էներգիայի առկա ռեսուրսներից և էլեկտրակայանների հզորությունից։

4. ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի համապատասխան կոմիտեներին ու հանձնաժողովներին հանձնարարել մինչև 1989 թվականի նոյեմբերի 1-ը մշակել արտակարգ միջոցառումների մասին ԽՍՀՄ օրենքի նախագիծ և մինչև 1989 թվականի դեկտեմբերի 1-ը՝ երկաթուղային տրանսպորտի մասին ԽՍՀՄ օրենքի նախագիծ։

5. ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը դատապարտում է հակաօրինական բռնի մեթոդների ու գործողությունների կիրառումը երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի հարցերի լուծման ժամանակ։

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ՝ Մ. ԳՈՐԲԱՉՈՎ

Մոսկվա, Կրեմլ, 3 հոկտեմբերի 1989 թ.